ԿԱՐԾԻՔ

Նաիրա Ալբերտի Սարհատյանի՝ ‹‹ Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները›› թեմայով ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Մերօրյա հասարակության արագընթաց զարգացումներն և դրան համընթաց լայնամաշտաբ սոցիալ-տնտեսական փոփոխությունները առաջ են քաշում ընտանիքի, ամուսնական փոխհարաբերությունների և սոցիալական կոնֆլիկտների նոր մոտեցումներ: Ժամանակակից հայացքների ազատականացումը, հայրիշխանության կարծրատիպերի վերանայումը, կանանց սոցիալ-տնտեսական հավասարության պահանջը, ամուսնական հարաբերությունների նոր մոդելների որոնումը փոխում են իրականությունը: Ձևավորվում են ընտանեկան ինստիտուտի վերաբերյալ նոր մոտեցումներ: Ընտանիքը փոքր սոցիալական խումբ է, սոցիալական ինստիտուտ, որտեղ ամուսինների, ծնողների և երեխաների միջև գործում է փոխհարաբերությունների որոշակի համակարգ: Ընտանեկան ինստիտուտը իր մեջ ներառում է նաև սոցիալ-տնտեսական, մշակութային և էթնիկական գործընթացներ: Ընտանիքի ժամանակակից տիպին առավել հատուկ է ամուսինների և երեխաների զարգացման դոմինանտություն և կրում է ավտոնոմ, անկախ բնույթ:

Ընտանիքի հոգեբանությունը, առաջին հերթին, իրենից ներկայացնում է ընտանիքի անդամների միջև առկա փոխհարաբերություններ՝ համախմբվածություն, հարաբերությունների ճկունություն, դերերի համակազմ: Համախմբվածությունը կամ հուզական մտերմությունը կարող է սահմանվել որպես սոցիալ-հոգեբանական փոփոխական, որն արտացոլում է ընտանիքի անդամների միջև առկա հարաբերությունների հոգեբանական տարածությունը: Ընտանիքը անձի համար ապահովության, անվտանգության միջավայր է, սակայն այստեղ նույն պես առկա են

տարրատեսակ խնդրահարույց հիմնահարցեր, որոնք իրենց ազդեցությունն են թողում ամուսինների և մյուս անձանց ընդհանուր և հոգեկան առողջության վրա: Որպես կանոն, ամուսնական ճգնաժամի այդպիսի դրսևորումները ձևավորվում են ամուսնական համատեղ կյանքի առաջին հինգ տարիների ընթացքում:

Ժամանակակից հոգեբանական գիտական գրականության ուսումնասիրություններում հեղինակները բազմիցս անդրադարձ են կատարել ատենախոսի կողմից քննարկվող հասկացություններին, դիտարկելով դրանք տարբեր տեսանկյուններից:

Հոգեբանության մեջ երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները կարող է դիտարկվել տարբեր տեսանկյուններից: Ամուսնական ճգնաժամերի պատճառների և կոնֆլիկտների ուսումնասիրություններին անդրադառցել են Ռ. Հիլլը, Դ. Կանտորը, Մ. Հիցկսը , Վ.Սիսենկոն, Ա.Օբոզովան, Յու.. Ալեշինան, Գ. Բուտենկոն և այլք: Այնուամենայնիվ հիմանախնդիրը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ ունի ուսումնասիրման, նորօրյա հետազոտության և լրամշակման կարիք որտեղ և մի շարք մոտեցումներ այլ լուծումներն են պահանջում:

Անդրադարձ կատարելով ատենախոսի ներկայացրած թեմային և պահանջներին՝ կարող ենք նշել, որ **Նաիրա Ալբերտի Սարհատյանի** կողմից պաշտպանության ներկայացրած ատենախոսության ծավալը կազմում է 160 համակարգչային էջ, բաղկացած է ներածությունից, առաջադրված տեսական և հետազոտական խնդիրների լուծման երեք գլուխներից, եզրակացություններից, հավելվածներից և 130 անուն տարրալեզու գրականություն ցանկից: Հեղինակը ներածական հատվածում անդրադառնում է ընտրված թեմայի արդիականությանը, պայմանավորելով և հիմնավորելով նրանով, որ ժամանակակից աշխարհում կենսական գործառույթների նոր սոցիալական պայմանները չեն կարող անփոփոխ թողնել անձի աշխարհայացքը, դիրքորոշումները, կարծրատիպերը, վարքաձևերը:

Սոցիալական նոր իրականությունը ներմուծում է իր ճշգրտումները և շատ հաճախ այդ փոփոխությունները ստանում են, թե կանխատեսելի, և թե ոչ կանխատեսելի բացասական երանգներ: Այս համատեքստում ընտանիքը, որպես սոցիալական համակարգ, ենթարկվում է զգալի փորձությունների՝ արտացոլելով ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը: Երիտասարդ ընտանիքները, գտնվելով անցումային փուլում, հաճախ բախվում են ավանդական և ժամանակակից արժեքներին՝ առաջացնելով դերային անհամապատասխանություններ:

Ն. Սարհատյանը ձևակերպել է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, առաջադրել վարկած, համաձայն որի՝ ենթադրում է, որ երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները պայմանավորվում են ծնողների ամուսնական դերերի հետ նույնականացումով և կրում են խմբային և ոչ անհատական բնույթ:

1. Ամուսինների կոնֆլիկտային հարաբերություններն անխուսափելի են, եթե դրանք բխում են ծնողների կոնֆլիկտային ամուսնական դերերին նույնականացումից:

2. Երիտասարդ ամուսինների ամուսնության բավարարվածությունը պայմանավորված է իրենց ծնողների ամուսնության բավարարվածության աստիճանով:

Շարադրված են հետազոտության մշակվածության աստիճանը և մեթոդաբանական հիմքերը, տեսագործնական նշանակությունը, հիմնավորված են ընտրակազմը՝ տարիքային, սեռային, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները և կրառված մեթոդներն ու մեթոդիկաները: Հստակ ձևակերպված են պաշտպանությանն ներկայացվող դրույթները և գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլխում «Ամուսնության և ընտանիքի զարգացման նկարագրությունը հասարակության պատմության ընթացքում» և երեք ենթագլուխներում Սարհատյանը ներկայացնում է ընտանեկան հարաբերությունների սոցիալ-պատմական ակնարկ, մեկնաբանում «Ամուսնություն» և «ընտանիք»

հասկացությունները որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, գործառույթները, ամուսնական ճգնաժամերի տարբեր մակարդակները:

Երկրորդ գլխում ատենախոսը ներկայացնում է ընտանեկան ճգնաժամերի սոցիալ-հոգեբանական վերլուծությունը, նորմերը և շեղումները, բացահայտում երիտասարդ ընտանիքներում ամուսնական կոնֆլիկտների սոցիալ- հոգեբանական պատճառները: Անդրադառնում ամուսնական կյանքի տարբեր փուլերին, դրանց բնորոշ դժվարություններին: Վերլուծելով երիտասարդ ընտանիքներում ճգնաժամերի ուղղվածությունը՝ հեղինակը առանձնացնում է որոշ կրկնվող կոնֆլիկտներ և ճգնաժամեր. լիդերության ճգնաժամ, պատասխանատվության ճգնաժամ, ծնողական ընտանիքների միջամտության ճգնաժամ, սեռական կյանքին հարմարման ճգնաժամ, տնտեսական ճգնաժամ:

Ատենախոսության երրորդ՝ «**Երիտասարդ ընտանիքների կոնֆլիկտների առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն և վերլուծություն**» գլխում Ն.Սարհատյան անդրադառնում է հիմնահարցի բուն էմպիրիկ հետազոտությանը: Առաջինին փուլում ձևակերպել է հիմնախնդիրը, սահմանվել նպատակը, առարկան, վարկածը, խնդիրները, ընտրվել են հետազոտության մեթոդիկաները: Երկրորդ փուլում առանձնացել է հետազոտության ընտրանքը, հիմնավորել է հետազոտության ռազմավարությունը, մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը: Երրորդ փուլում կատարել է հետազոտության տվյալների մշակում՝ քանակական և որակական, համահարաբերակցային վերլուծություններ, ընդհանրացվել են արդյունքները, ձևակերպվել են եզրակացություններն ու գործնական առաջարկները: Ստացված տվյալները արծարծել է աղյուսակների, գծապատկրների ձևով: Նույն գլխի 3.3 ենթագլխում հեղինակը ներկայացրել է Գործնական առաջարկություններ: Հեղինակը բացահայտել է ամուսնական զույգերի կոնֆլիկտային վարքի նկատմամբ նախատրամադրվածությունը և դիտարկել այն մի քանի տեսանկյուններից: Հտազոտել է կողմերի ամուսնությունից բավարարվածության մակարդակը, ամուսինների սոցիալ-հոգեբանական համատեղելիության աստիճանը,

զույգերի ընտանեկան դերերի և դրանցում ամուսինների գործառույթների իրականացման լիարժեքությունը, դերերի բաշխման վերաբերյալ նրանց պատկերացումներն ու ընտանիքում դրանց դրվածքի առանձնահատկությունները: Հետազոտություններում տեղ են գտել նաև ամուսնական կյանքում զույգերի դերային սպասելիքներն ու հավակնությունների մակարդակը, այդ թվում նաև ընտանեկան արժեքների համակարգության (ընտանիքին նվիրվածության, սեռական կյանքի, ամուսինների ընդհանրությունների, ծնողական պարտականությունների, հետաքրքրությունների, արտաքին գրավչության և այլն) արտահայտվածությունն ու դրանց նկատմամբ ունեցած գնահատականները:

Ատենախոսական աշխատանքին կից ներկայացվող սեղմագիրը իր կառուցվածքային և բովանդակային բնութագրերով, հասկացությունների ձևակերպման պահանջներով, գիտական խնդիրների մեկնաբանման հնարավորություններով համապատասխանում է ատենախոսության բովանդակությունը, պաշտպանությանը ներկայացված դրույթները և աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումները:

Ատենախոսի կողմից կատարվել է լուրջ, երկարատև և բազմակողմանի աշխատանք: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ առկա են որոշակի վիճահարույց հարցեր.

1. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ներկայացներ ընտանեկան ճգնաժամերի ընթացքում կոնֆլիկտների բնույթը, դրանց սոցիա-հոգեբանական առաջացման պատճառները, զարգացման գործընթացը, ինչը առավել հասկանալի կդարձներ կոնֆլիկտի հետազոտության առարկան:
2. Ինչո՞վ է պայմանավորված ատենախոսության էմպիրիկ հատվածում հետազոտական 2-րդ և 4-րդ խմբերի ընտրությունը:
3. Ատենախոսության փորձարարական հատվածում հեղինակը 3-րդ գլխի 3.2 և 3.3 ենթագլուխներում ներկայացնում է ուսումնասիրությունը և ստացված

արդյունքների համահարաբերակցային կապերի վերլուծությունը: Վերոհիշյալ ենթագլուխներում հետազոտության համար ընտրված մեթոդիկաները մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել, ներկայացվել աղյուսակների տեսքով, սակայն հետազոտության տվյալները առավել պատկերավոր և ընկալելի կլինեին, եթե հեղինակը յուրաքանչյուր մեթոդիկայի տվյալները ներկայացներ նախ գրաֆիկական պատկերների միջոցով, տոկոսային հարաբերությամբ, կատարեր որակական վերլուծություններ նոր միայն ներկայացներ աղյուսակներով՝ ինչը հնարավորություն կընձեռեր բանաձևով կարգային համահարաբերակցական կապերի հաշվարկները դիտարկելիս արտահայտել ոչ միայն համահարաբերակցման գործակիցը, այլ նաև կագերի տարբերության քառակուսիների գումարը, դիտարկվող զույգերի թիվը տվյալները բանաձևի մեջ տեղադրելով (բանաձևը տե՛ս ներքևում):

$$\rho = 1 - \frac{6\sum d_i^2}{n(n^2-1)}$$

4. Աշխատանքի գրականության ցանկում հղումները արտահայտված են, սակայն մի շարք էջերում ատենախոսը կրկնակի տեղադրել է էլեկտրոնային հղումներ: մասնավորապես 93, 94 և այլ էջերում:
5. Ատենախոսության մեջ առկա են տեխնիկական վրիպակներ և թերություններ, մասնավորապես՝ քերականական սխալներ, բացթողումներ:

Կարծում ենք նշված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է բավականին ծավալով տեսական վերլուծություն և փորձարարական հետազոտություն:

Ատենախոսությունը գիտական պատշաճ մակարդակով գրված հոգեբանական աշխատություն է, ներկայացնում է հոգեբանության բնագավառի կարևոր նորույթ պարունակող խնդիր, իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության

գիտության կոմիտեի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի՝ գիտության տվյալ բնագավառում կարևոր խնդրի լուծում պահանջին, իսկ հեղինակը՝ Նաիրա Ալբերտի Սարհատյանը, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Լ.Ռ. Արամյան**

Լ. Ռ. Արամյանի ստորագրությունը հաստատում եմ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի գիտական քարտուղար, **մանկավարժական**

գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Հ.Վ. Թադևոսյան**

Ք. Երևան , 13.02.26 թ.